


1

ԱԶԿԱՏՈՒԹԻՒՆ
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ



2

2-22

31 JAN 2013

2
U-22

1

14 JUL 2009

ՈՉ ԹԷ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲՐՈՒԲԱԿԱՆՏԱ ՄԸ,

հապա ճՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ձեր մխիթարութեանը համար

"Freedom in the New World"
Armenian



3377-89

Հրատարակիչը՝

WATCHTOWER BIBLE AND TRACT SOCIETY, INC.
International Bible Students Association
Brooklyn, N. Y., U. S. A.

Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ Տպուած

Made in the United States of America

Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆ
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ.

Ա ՉԱՏ ԱՇԽԱՐՀԸ Ամենակալ Աստուծոյ ձեռքովը միայն կրնայ գալ: Ան դռներուն ջոխն է, եւ երկնից մէջ կամ երկրիս վրայ չկայ զօրութիւն մը որ կրնայ արդիւլէլ Ամենակալ Արարիչը զայն շինելէ՝ ու իր ամբողջ փառքովը՝ արժանի արարածներու ընծայելէ: Ան ամբողջովին Աստուծոյ որդիներէ բաղկացեալ աշխարհ մը պիտի ըլլայ, ուր Աստուծոյ Հայրութիւնը իրականութիւն մը դարձած պիտի ըլլայ բոլոր բարեացակամ արարածներու համար: Աստուծոյ տունը ազատ արարածներու ընտանիք մըն է, ուր իւրաքանչիւրը կը կրէ իր կենսապարգեւ Հօրը պատկերը՝ առանց ոեւէ մէկուն գերին ըլլալու: Իրական եւ լիակատար ազատութիւնը պիտի ըլլայ Աստուծոյ որդիներուն բաժինը, ու այդպէս ալ պիտի մնայ: Անոնց ամենազօր Հայրը՝ այս երկիրը ազատաւայր մը պիտի ընէ Իր զաւակներուն յախտեանական կենաց ու վայելքին համար: Անոր կամքը չէ որ Իր զաւակները բռնապետներու հպատակին. այլ ամէն ոք Իր ազատ կազմակերպութեանը միանայ եւ Բարձրեայն Աստուծոյ տիեզերական կազմակերպութիւնը ընդունի:



Աստուծոյ ստեղծած ազատ աշխարհը առանց արիւնհեղութեան չդար, ատիկա ըլլալով արիւնը այն ամենամեծ Ազատասէրին, որ երբեք զալած ըլլայ այս երկրիս վրայ: Վճարուած դիրնձոր աշխարհը հաստատ յոյսի մը կը վերածէ, թէեւ ճամբուն վրայ դեռ շատ մը զօրաւոր թշնամիներ կան: Կատարեալ ազատութեան աշխարհը պիտի գայ, այո՛, բայց տակաւին տեղի պիտի ունենայ հսկայ պատերազմ մը եւ աւելի արիւնհեղութիւն, ազատութեան

Թշնամի եղող բոլոր մարդոց արիւնը պիտի թափուի դեռ՝ «Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուան պատերազմ»-ին մէջ, որ վերջ պիտի դնէ բոլոր պատերազմներուն:

Ներկայ աշխարհը ազատ չէ: Չարմանալի չէ ուրեմն որ բոլոր արարածներ կը հառաչեն: Անոնք յուսահատ ջանքեր կը թափեն լոկ իրենց ուժերովն ու ծրագիրներովը ինքզինքնին ազատելու, բայց ատոնք ձախողութեան դատապարտուած են ցարդ: Մարդկային ամբողջ ազգին վրայ ճնշումը երթալով կը ծանրանայ: Երբ լրջամիտ անձինք նկատի կ'առնեն քաղաքագէտներուն խորտակուած խոստումներովը ծածկուած մարդկային պատմութեան երկար ճանապարհը, քաղաքագէտներուն հետ ձեռք ձեռքի յառաջ ընթացող կրօնականներուն կեղծ ու անզօհացուցիչ մխիթարանքը, եւ մարդկային բարեկարգութեան ու բարձրացման ջանքերուն դէմ հանուած յարատեւ արգելքներն ու խոչընդոտները, անոնք իրենց յոյսերը ետ կը քաշեն հողեղէն մարդոցմէ: Անոնք իրենց յուսալքութեան մէջ կը յուսան թէ արդարութեան Աստուած մը կայ, որ իրերու կացութիւնը կը տեսնէ եւ արդարութեան ջատագով պիտի հանդիսանայ ու տեւական հանգստութիւն ձեռք պիտի բերէ:

Աստուծոյ որդիներուն ազատութեան համար քաջութեամբ կռուող եւ Ազատութեան այն մեծ Գըրբին ու Իրաւագրին՝ Աստուածաշունչին՝ պատրաստութեան մէջ բաժին ունեցող մարդ մը՝ խիստ պատշաճօրէն նկարագրեց մարդկային արարածներու երկար փորձառութիւնը երբ գրեց. «Արդարեւ, ստեղծուածներուն եռանդուն ակնկալութիւնը Աստուծոյ որդիներուն յայտնուելուն կը բաղձան: Վասն զի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները (ոչ թէ իրենց կամբովը՝ հապա անոր համար որ հնազանդեցուց), այն յուսով, որ ստեղծուածները իրենք ալ ապականութեան գերութենէն ազատա-

զրուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ԱԶԱՏՈՒԹԵԱՆԸ հասնին: Քանզի դիտենք որ ամէն ստեղծուածները մինչեւ հիմա մէկտեղ կը հառաչեն ու ծնանելու ցաւ կը քաշեն» (Հոովմ. Բ. 19--22, ըստ Տայրկիաքի Թարգմ.): Ամէն մարդ այս տեսակ ակնկալութիւն չունի եւ այդ ազատ աշխարհին չի բաղձար, ինչու որ ամէնն ալ ապրող բոլոր մարդոց ազատագրութեանը չեն հաւատար. ատկէ զատ՝ ամէն անհատ ի սրտէ չի ցանկար ազատ աշխարհի մը, քանզի ամէն մարդ արդարութիւն ի գործ դնելու չփափաքիր: Ծատեր կը նախընտրեն որ ներկայ աշխարհը շարունակ մնայ՝ իրենց եսին յաղեցմանը համար: Ազատութիւն եւ արդարութիւն ատող այդպիսի անձեր պէտք է որ մէջտեղէն ելլեն ու պիտի ելլեն: Հակառակ ատոնց՝ կը մօտենայ օրը երբ երկրային արարածներու հառաչանքը պիտի դադրի, որովհետեւ անոնց պիտի ընծայուի Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութիւնը:

Այն պարզ իրողութիւնը թէ աշխարհաճանօթ քաղաքագէտներ եւ Ժողովրդապետութիւն սիրողներ բոլոր ազգաց «Չորս Ազատութիւններ»ուն մասին կը խօսին շարունակ՝ ապացոյց է թէ աշխարհը շղթայակապուած է: Բայց մի սխալիք: Պաշտամունքի ու խօսքի ազատութիւնները եւ վախէ ու կարօտութենէ ազատութիւնները բաւական չեն ստեղծելու համար ազատ աշխարհ մը ուր արդարութիւն բնակի: Համաշխարհային այս պատերազմէն եւ յետպատերազմի միջնադարային յանձնաժողովէն շատ աւելի մեծ բանի մը պէտք պիտի ըլլայ՝ առաջ բերելու համար այդ նոյն իսկ չորս փափաքելի բաները: Յոռետեսութեան եւ յուսալքութեան խօսքեր ըրած չենք ըլլար՝ երբ ըսենք թէ մարդկային ձեռքեր չեն կրնար ամբողջ աշխարհի ընծայել այդ չորս ազատութիւնները եւ հաղարամեայ խաղաղութիւնը: Ասոնք Աստուծոյ եւ Անոր նպատակին նկատմամբ քաջ հաւատարի խօսքեր են. ինչու որ այդօրինակ գիտութիւնը

անհատը կ'ազատէ տգէտ մարդոց տխմարութիւններէն եւ ունայնամտութիւններէն: Նոր աշխարհը հիմնելու՝ եւ այն ատեն բարեացակամ մարդոց վայելելիք աշխարհաձաւալ ազատութեան պատիւը ունէ մարդկային արարածի պիտի չտրուի: Մարդիկ որոնք կը խորհին թէ իրենք այս բաները կրնան դրուիլ հանել ի պատիւ իրենց անձին, ի պատիւ իրենց պատկանած քաղաքական կուսակցութեան եւ կրօնական աղանդին, իսկապէս՝ Աստուծոյ նպատակին գործադրութեան արգելք կը հանդիսանան: Հակառակ իրենց ունեցած կարելի բոլոր բարի արամագրութեանց՝ անոնք ամենազօր Աստուծոյ հակառակորդները եւ մարդկային տեւական բարեխառութեան մեծագոյն արգելքները կը դառնան:

ԱՉՍՏՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍՏ

Աստուծոյ մարդկային որդւոց ազատութիւնը՝ առաջին անգամ ըլլալով աշխարհիս վրայէն անյայտ եղաւ վեց հազար տարիներ առաջ, երբ այն անզգամ դաւադիրը, Բանսարկու Սատանան, տիեզերական տիրապետութեան հետամուտ եղաւ: Ադամ «որդին էր Աստուծոյ» (Ղուկ. Գ. 23, 38): Եհովա Աստուած իր այդ «որդի»ին համար ազատ աշխարհ մը հիմնեց եւ անոր կին մը տալէ յետոյ՝ երկուքին ալ պատուիրեց որ իրենց նմանը արտադրեն եւ երկիրը լեցունեն ազատ ու արդար սերունդով մը: Ծառ չանցած՝ Բանսարկու Սատանան մարդկային ազգը սկզբնաւորութենէն իր ճանկին մէջ առնելու ջանաց: Այդ բանին մէջ յաջողելու համար՝ ան պարտաւոր էր անոնց Աստուածորդիական ազատութիւնը խլել եւ զանոնք իրեն հպատակեցնել: Անոնք՝ այնքան ատեն ազատ պիտի մնային եւ ապրելու իրաւասութիւնը պիտի ունենային՝ որքան ատեն որ իրենց Արարչին Աստուծոյ պատկան օրէնքին նկատմամբ կատարեալ հնազանդութիւն ցոյց տային: Եթէ այնպէս մ'ըլլար որ անոնք ալ Սատանային նման օրէնքը ոտքի տակ տու-

նէին՝ անոնք այդ կերպով ինքնաբերաբար Աստուծոյ որդիներուն առնէն դուրս պիտի ձգուէին ու Բանսարկուին կողմը պիտի անցնէին: Ուստի կարեւոր էր խաբէութիւն ի գործ դնել: Որպէս զօրաւոր հրեշտակ մը երեւնալով՝ Բանսարկուն անոնց վայելածէն աւելի մեծ ազատութիւն խոստացաւ անոնց: Ի՞նչ էր գործածուած միջոցը: Ծննդոցի Գ. գլխուն մէջ փորձութեան պատմութիւնը կարգալով եւ ուսումնասիրելով պիտի տեսնէք թէ գործածուած միջոցը կրօնքն էր: Կրօնք կը նշանակէ՝ ընդունիլ այն ինչ որ Աստուծոյ խօսքը կ'ուրանայ, եւ առկէ յետոյ Աստուծոյ խօսքին ու պատուէրին հակառակ շարժիլ: Բանսարկուն Ադամի ու Եւայի առջեւ դրաւ կրօնքը, ըստ իր խօսքին, զանոնք իմաստուն եւ աստուածաման՝ ընելու համար. բայց կրօնքի հետեւիլը անոնց համար հակառակ արդիւնք ունեցաւ: Այժմ տիեզերական հարցը առաջ ըջուած ըլլալով՝ Եհովա Աստուած Ադամն ու Եւան չզրկեց իր անուամբ նախատինք բերող կրօնքի ու խօսքի ազատութենէն: Մեր նախածնողքը՝ իրրեւ կրօնապաշտներ ու ապստամբներ՝ եւ 'ստութեանց հայր՝ Սատանային իրրեւ հետեւորդներ, Եղեմի դրախտային պարտէզէն վտարուած ըլլալով անմիջապէս կորսնցուցին իրենց վախէ ու կարօտութենէ ազատութիւնը:

Երեւակայեցէք թէ որքա՛ն մեծ էր ամբողջ մարդկային ազգին ազատութեան կորուստը: Մեր նախածնողքը աժանօրէն ծախեցին վախէ ու կարօտութենէ ազատ ըլլալէ շատ աւելի մեծ բան մը: Անոնք կորսնցուցին այն բանը զոր մէր օրուան քաղաքական, առեւտրական եւ կրօնական ուժերը վերադարձնելու անկարող են: Անոնք կորսնցուցին մեղքէն ու անոր պատիժէն իրենց ազատութիւնը, այդ պատիժն ըլլալով մահ, անոր յարակից անկատարութիւններովը, կիրքերովը, հիւանդութիւններովը, յոգնութիւններովը, արկածներովը, ծերութիւնովը եւ գերեզմանովը: Անոնք կորսնցուցին Աս-

տուժոյ ազատ կազմակերպութեան մէջ Անոր ծառայելու առանձնաշնորհը, եւ մեղքին՝ եւ մարդուն ամենամեծ կեղեքիչին, Աստուծոյ հակառակորդին, ծառաները եղան: Մարդկային ազգին վրայ իր ունեցած իշխանութենէն բոլորովին վստահ՝ Սատանան Աստուած նախատեսց, ըսելով թէ Նա անկարող էր երկրիս վրայ դնելու մարդ մը որ Սատանային փորձութիւններուն դիմադրելով պիտի ուզէր ԵՏՈՎԱ Աստուծոյ ծառայել ու Անոր հաւատարիմ մնալ: Այդ մարտահրաւէրով նա կը ծանուցանէր թէ պիտի գար ատեն մը՝ երբ Սատանան ու իր կրօնական համբախները (տգէտ գործակալները) կրօնական բռնութիւն ի գործ պիտի դնէին եւ թէ սեւէ մէկուն թոյլ պիտի չտային որ ԵՏՈՎԱ Աստուածը ազատօրէն պաշտեն հոգւով ու ճշմարտութեամբ: Կրօնական բռնութեան առաջին զոհը Արէլն էր, որ մեռաւ իբրեւ ԵՏՈՎԱԿԻ առաջին վկան:

Ապականած աշխարհի մը հիմը դրուեցաւ այդ Ժամանակ: Մարդուն անտեսանելի գերիշխան Սատանան ուրիշ հոգեղէն արարածներ իր կողմը քաշեց եւ անոնցմով գիււական հոգի կազմակերպութիւն մը յառաջ բերաւ ԵՏՈՎԱԿԻ տիեզերական կազմակերպութեան դէմ կռուելու եւ մարդոց վրայ տիրապետելու գործին մէջ իրեն օգնելու համար: Ազամէն սկսեալ երրորդ սերունդին օրով կրօնքի հիմը դըրուեցաւ, երբ մարդիկ սկսան կեղծաւորաբար թէ՛ իրենք իրենց եւ թէ չաստուածներուն վրայ Տիրոջ անունը դնել (Ծննդ. Դ. 26, Ժ. 9): Ատոր յաջորդեց մարդոց գործերուն մէջ ղեւերուն միջամտութիւնը. ցեղային ապականութիւն առաջ տարուեցաւ. անաստուածութիւնը անեցաւ երբ մարդիկ բոլորովին անձնատուր եղան ուտելու, խմելու, ամուսնանալու եւ ուրիշ (Եաստիրական) գործունէութեանց, եւ անտարբերութիւն ցոյց տուին ԵՏՈՎԱԿԻ վկաններու պատգամին նկատմամբ: Ապականած երկրիս վրայ բռնութեան հոսանք մը տարածուեցաւ: Մարդկային

գորութիւնը բոլորովին անբաւական էր երկրիս վրայ դիւալին երկինքին ի գործ դրած բռնութիւնները խորտակելու համար: Մարդկային ոչ մէկ ազատաբար կրնար մարդկութեան փրկելի մասը այդ անաստուած աշխարհէն ազատել եւ զանոնք արդար ու խաղաղ վիճակներու առաջնորդել: Աստուծոյ ամենակարող գորութեամբ այդ աշխարհը ոչնչացելով էր որ մարդկութիւնը ազատութեան նոր ծնունդ մ'ունեցաւ: Աստուած՝ Սատանային ու կրօնքի ծառայութիւն չմատուցանող ութ հոգի միայն արդար սեպեց: Այդ ութը հոգիները, Նոյ եւ անոր ընտանիքը, «Հին աշխարհ»ի վերջաւորութեանը ողջ պահուելով ազատուեցան-- Բ. Պետրոսի Բ. 5, Գ. 6:

Այդ հին աշխարհը 1656 տարեկան էր՝ երբ անուշիկ ջրհեղեղը վերջ դրաւ անոր ապականութեանը, բռնութիւններուն եւ ԵՏՈՎԱ Աստուծոյ անունը բերած նախատինքին: Ատոր յաջորդեց ուրիշ աշխարհ մը: Միթէ ան առաջուանէն աւելի լա՞ւ եղած է: Անոր մարդկային այլասերութեան շրջանը աւելի երկար եղած է: Քաղաքականութեան եւ առեւտրականութեան հետ միացած կրօնքը անոր մէջ աւելի երկար ատեն տեսած է, ջրհեղեղէն իվեր 4300 տարի անցած ըլլալով: Բազմաթիւ շրթներէ ներկայիս ազգակի կը բարձրանայ ազատութեան եւ աւելի ընտիր ու լաւ աշխարհի մը համար: Այդ ազգակի որո՞նց է որ կ'ուղղուի: Ազգաց քաղաքական պարազը լուխներո՞ւն, կրօնապաշտ կղերներո՞ւն եւ առեւտրական ու անտեսական կախարհներուն. ամէն պարագային ալ միա՛յն մարդ արարածներու: Յետպատերազմի պէտքերու մասին Նիւ Եորք քաղաքի երեւելի կղերներէն մին վերջերս ըսաւ. Պատերազմէ յոգնած աշխարհը ԿրՕՆՔԻ կը սպասէ որ «բանի մը ծայր տայ»: Ենթադրաբար՝ արդիական աշխարհի խաչակրութեան մը-- Նիւ Եորք Թայմզ, Յունիս 14, 1943:

Միթէ մարդիկ ներկայ չար աշխարհին, անոր քաղաքականութեանց, շահասիրական առեւտուրներուն

եւ կրօնքին ոչնչացմամբնը համար է որ կ'ազդակեն: Ո՛չ, երբե՛ք. հապա, ինչպէս մէկը ըսած է. «Այս հին աշխարհի անճանաչելի ըլլալու աստիճան կերպարանափոխման» համար: Այդ մարդակերտ կերպարանափոխութիւնը պիտի կրնա՞յ մարդկութեան ընծայել Աստուծոյ որդիներուն ազատութիւնը: Մակերեսով փայլեցուած հին աշխարհը իրեն վիճակուած ոչնչացումէն պիտի կրնա՞յ խուսափել կամ զանդիկա արգիլել: Մարդկային անցեալ պատմութեան վրայ հիմնուած պարզ դատողութիւնը պարտաւոր է Ո՛չ պատասխանել: Իսկ Աստուծոյ նկատմամբ հաւատքն ալ, Որուն Սօսքը ճշգրիտ բացատրութիւնը կու տայ ներկայի դժուարին կացութեան եւ անոր դարձանին մասին, աւելի հաստատ համոզումով մը կը պատասխանէ՝ Ո՛չ: Մարդու ձեռքով յօրինուած «աշխարհային նոր կարգ ու սարք» մը՝ մարդոցմէ երաշխաւորուած ազատութեանց չըլացուցիչ խոստումներովը՝ պիտի տեսնուի թէ խաբէութիւն մըն է միայն: Ատիկա պարզապէս մարդիկ աւելի քան երբեք «այս աշխարհի աստուած»ն եղող Սատանային իշխանութեան տակ պիտի դնէ եւ դանոնք պիտի քնացնէ այն ամենաքանդ աղէտին նըկատմամբ՝ որուն նմանը երբեք չէ տեսնուած: Աստուծոյ Որդին, Որ նոր Աշխարհին համար Իր արիւնը թափեց եւ անոր անխախտ հիմն է, ըսաւ. «Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհեղեղէն առաջ, կ'ուտէին, կը խմէին, կ'ին կ'առնէին ու էրկան կուտային, մինչեւ այն օրը որ նոյ տապանը մտաւ, եւ չդիտցան՝ մինչեւ ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց, Որդւոյ մարդոյ դալուստն ալ այնպէս պիտի ըլլայ»-- Մատթ. ԻԳ. 37--39:

Ջրհեղեղէն առաջ մարդիկ ինքզինքնին այնպէս համոզեր էին թէ զոյութիւն ունեցած կրօնական, ընկերային եւ կառավարական հաստատութիւնները անխախտ ու մշտնջենական էին. ուստի անոնք արհամարհեցին ՅՏովայի հաւատարիմ վկաներուն,

Նոյի եւ անոր ընտանեաց անդամներուն, տուած ազդարարութիւնը: Պատմութիւնը պիտի կրկնուի դարձեալ: Այս համաշխարհային պատերազմէն վերջ ներմուծուած «նոր կարգ ու սարքեր»ուն ատեն, յետպատերազմի եղած կարգադրութեան ջատագովներու յառաջ տարած պաշտօնական բրորականտան հասարակ ժողովուրդը պիտի համոզէ թէ աւելի լաւ աշխարհը ա՛լ եկած է որ մնայ. թէ՛ մարդկային ձեռքերն են որ ստեղծած են դայն եւ թէ՛ մարդկային ձեռքեր դայն պիտի պաշտպանեն միջազգային ոստիկանական ուժով մը: Աշխարհածաւալ ազատութեան համար խիստ փայլուն հեռանկար մը պիտի պարզեն, եւ կրօնականութիւնը պիտի յայտարարէ թէ ատիկա՛ է այն նոր աշխարհը՝ որուն մասին մարդիկ երկար ատեն երազած են եւ թէ ան կրօնքի օրհնութեան դրօշմը կը կրէ ու պէտք է որ տեւական ըլլայ: Իայց կանդ առէք ու հարց ըրէք դուք ձեզի. ինչո՞ւ համար է որ մասնաւորապէս 1918-էն ի վեր՝ քաղաքագէտներու եւ կրօնապաշտներու կողմէ ստեղծուելիք նոր աշխարհի մը մասին յանկարծ այսքան մեծ գոռում գոչիւնով բրորականտա յառաջ կը տարուի եւ թէ ո՞վ է ատոր թեւ թիկունք եղողը:

Երբ Փաշիսթ եւ Նացի դիկտատորները, իրենց կարգին, 1929-ին եւ 1933-ին Վատիկան Քաղաքի կրօնապետին հետ իրենց դաշինքները կնքեցին, անոնք իրենց աշխարհածաւալ յարձակողականի միացեալ ծրագիրը ասպարէզ նետեցին, յայտարարելով թէ իրենց նպատակն էր համաշխարհային նոր կարգ հաստատել, հազար տարի տեւելու պայմանաւ: Հռովմի քահանայապետն ալ աղօթեց որ իրերու նոր կարգ ու սարք հաստատուի, եւ Առանցքը կայմող պետութիւնները այդ աղօթքին այն մեկնաբանութիւնը տուին թէ կրօնական քահանայապետը ըմբռնած էր իրենց ըզձանքն ու նշանակէտը (Նոյեմբեր 24, 1940): Առանցքի պետութեանց նախա-յարձակութիւնը համաշխարհային պատերազմի ա-

ուջնորդեց: Նախայարձակման քաջարար ղեմադր-
րող կառավարութիւնները իրարու քով եկած են սա
հակա-մարտակոչով:-- շինել նոր աշխարհ մը՝ ուր
Զորս Ազատութիւնները բացարձակապէս տիրեն
երկրիս վրայ: Համաշխարհային պատերազմի հրա-
տապ շրջանին՝ այդպիսի ժողովրդապետական աշ-
խարհի համար բրտականտա կը մղուի, եւ զորա-
շարժ եղած ժողովուրդը կը խթանուի որ ընդհա-
նուր ջանք թափելով ձեռք բերէ այն յաղթութիւնը
որ հետագայ խաղաղութիւնը պիտի ապահովէ: Դա-
նիէի մարզարէութեան ժԱ. գլուխը՝ բացարձակա-
պետական (քօթալիքէրիքը) «հիւսիսի թագաւոր»ին
եւ անոր զաշնակիցներուն կողմէ՝ ժողովրդա-
պետական (տէմօքրաթիք) «հարաւի թագաւոր»ին
եւ անոր միացեալ ազգերուն դէմ մղուած այս աշ-
խարհածաւալ կռիւին մասին նախաձայնեց: Ներ-
շնչեալ մարզարէն կը յայտարարէ թէ՛ ատիկա
ապացոյց է ներկայ աշխարհը իր «վերջին ժա-
մանակ»ին հասած ըլլալուն, երբ վերջ պիտի դոնեն
բոլոր բացարձակապետական իշխանութիւնները,
Սատանայէն ու անոր դեւերէն սկսեալ մինչեւ ըս-
տորազաս մարդիկը:

ՄԱՐԴՈՒՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԸ ԽԱՂԱՆ

Կը տեսնէք որ «Քրիստոնէայ աշխարհ»ը, ճգնա-
ժամի մէջ ըլլալուն համար, մարդոց կողմէ նոր
ծրագրով շինուած աշխարհի մը միջոցաւ ազատա-
գրութեան դրօշ պարզած է ժողովուրդին համար:
Արդեօք մարդոց արթնցած յոյսերը պիտի կրնա՞ն ի-
րականանալ: Սրբազան պատմութիւնը, որ աշխար-
հի վախճանին հասնող հաւատացեալ մարդոց դաս-
տիարակութեանն ու առաջնորդութեանը համար
գրուած էր նախապէս, պատասխան կու տայ այդա-
րարիչ օրինակով մը: «Քրիստոնէայ աշխարհ»ը,
այս «վերջին ժամանակ»ուան մէջ, որոշ համանմա-
նութիւն ցոյց կու տայ հին դասալիք Երուսաղէմի,

որուն դէմ Եհովայի վրէժխնդրութիւնը յայտարար-
ւած էր իր կրօնական կեղծաւորութեանը համար,
իր ճակատագիրը վճռուած ու վախճանին մօտեցած
ըլլալով: Սեղեկիա թագաւոր յուսահատօրէն ջանաց
ժողովուրդը հանդարտեցնել եւ իր իշխանութեան
տակ պահել: Անիկա «Երուսաղէմի մէջ եղող բոլոր
ժողովուրդին հետ ուխտ ըրաւ որ (անոնց) ազա-
տութիւն քարոզեն»: Ատիկա չէր նշանակէր թէ ժո-
ղովուրդին իշխաններն ու կրօնական եւ տնտեսական
տէրերը սրտի փոփոխութիւն կրեր էին: Ինչո՞ւ: Ո-
րովհետեւ, այդ ազատութենէն քիչ վերջ, որուն ժո-
ղովուրդը իրաւունք ունէր ըստ Աստուծոյ օրէնքին,
իշխանները «դարձան, ու իրենց ազատ թող տուած
ծառաները ու աղախինները ետ դարձուցին, եւ զա-
նոնք բռնադատեցին որ ծառաներ ու աղախիններ ըլ-
լան»-- Երեմեայ ԼԴ. 8--11:

Ատիկա՛ կրօնական եւ քաղաքական խմբակցու-
թեան կողմէ՛ Աստուծոյ անուամբը ժողովուրդին
չահերուն դէմ ի գործ դրուած դաւաճանութիւն մըն
էր: Հետեւաբար Եհովա, Իր Երեմիա վկային միջո-
ցաւ սա պատգամը ղրկեց անոնց. «Տէրը այսպէս
կ'ըսէ. Դուք ինձի մտիկ չըրիք, որ ձեզմէ ամէն մէկը
իր եղբորը համար ու ամէն մէկը իր ընկերին համար
ազատութիւն քարոզէ. ահա ես ձեզի համար, կ'ըսէ
Տէրը, (ՍՈՒՐԻՆ, ԺԱՆՏԱՆՏԻՆ ՈՒ ՍՈՎԻՆ) ազա-
տութիւնը կը քարոզեմ. ու ձեզ երկրի բոլոր թագա-
ւորութիւններուն մէջ նեղութեան պիտի մասնեմ...
Չանոնք իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հո-
գին փնտոզներուն ձեռքը պիտի մատնեմ» (Երեմ.
ԼԴ. 17, 20): Կեղծաւոր, կրօնապալ'չտ Երուսաղէմը
Հրեաները խարեց իր ազատութեան ծրագրով, բայց
ի գո՛ւր: Քիչ վերջ ան բոլորովին հիմնադատակ ե-
ղաւ ի ջատագովութիւն Եհովայի սուրբ անուան ու
արդարութեան:

Երուսաղէմի նման՝ «Քրիստոնէայ աշխարհ»ը կը
ծանուցանէ թէ ինք Աստուծոյ հետ յարաբերութիւն

ունի: «Քրիստոնեայ աշխարհ»ը կրօնքի է որ կը հե-
տեւի, փոխան Ազատութեան իրական Գրքին, Աստ-
ուածաշունչին, մէջ հաստատուած Անոր օրէնքին ու
պատուէրներուն համաձայն ընթանալու: Նա կրօնքի
գրամ կը վճարէ ու անոր նեցուկ կը հանդիսանայ՝
որպէս զի անիկա օրհնէ համաշխարհային տիրապե-
տութեան իր ծրագիրները: Եհովայի վկաները եր-
կար ատենէ իվեր յայտարարած են անոր թէ՛ Աս-
տուծոյ օրէնքին ու կարգադրութեան համաձայն՝
ա՛յ եկած հասած է Թագաւորութեան ժամանակը
բարեացակամ մարդոց ազատութեանը համար: Ներ-
կայ աշխարհածաւալ պատերազմը, եւ նախընթաց
Համաշխարհային Պատերազմը եւ այն ատենուան
սովերը, համաճարակները, երկրաշարժները ու Ե-
հովայի վկաներուն հալածանքները այդ բանը կ'ա-
պացուցանեն: Ինչո՞ւ: Որովհետեւ ատոնք Աստուծոյ
Որդւոյն մարգարէութիւնը կ'իրականացնեն եւ կը
վկայեն թէ՛ հարստահարիչ «Քրիստոնեայ աշխար-
հ»ին ու Սատանային ամբողջ կազմակերպութեան
փխճանը մօտեցած է: Անոր ոչնչացումը տեղի պի-
տի ունենայ Ազատութեան փառապանծ Աստուծոյն,
Եհովայի, ձեռովը, որպէս զի ճամբայ պատրաստ-
ւի իր Նոր Աշխարհին համար, որուն Աստուծապե-
տական Թագաւորն է Քրիստոս Յիսուս: Ուրեմն ին-
չո՞ւ համար է որ «Քրիստոնեայ աշխարհ»ը, որ ինք-
զինք Աստուծոյ ներկայացուցիչը կը յայտարարէ,
մարդակերտ նոր աշխարհի մը համար ունեցած իր
ծրագիրը յառաջ կը քէ մարդիկ իրենց հարստահա-
րիչներէն ազատելու մտադրութեամբ: Ատոր պատ-
ճառը այն է՝ որ անոնք կ'ուզեն ժողովուրդին յոյսե-
րը արդէն իսկ ձախորդ մարդոց վրայ հաստատուած
պահել, եւ նմանապէս՝ ժողովուրդը կուրացնել ու
ետ պահել այն «նոր երկինք»էն ու «նոր երկիր»էն
զորս Ամենակալ Աստուած իր Գրքին մէջ խոստացաւ
ներկայ աշխարհածաւալ պատերազմէն երկա՛ր ա-
տեն ատա՛յ - Երեմ. 17. 1-22:

Սեղեկիա Թագաւորի եւ պատերազմէ լոնադատ-
ւած իր իշխաններուն նման, առաջադրուած նոր աշ-
խարհը, որուն համար շատ մը շլացուցիչ խոստում-
ներ կ'ընեն ներկայիս, պիտի սկսի մարդկային ազա-
տութեանց համար կարգ մը իրական ջանքերով ու
կարգադրութիւններով: Սակայն որքան ատեն որ
Սատանան «այս աշխարհի աստուած»ն է՝ ազատ աշ-
խարհ մը երբեք իրականութիւն մը պիտի չըլլայ
մարդկային ջանքերով: Աստուծոյ Սօսքը բացորոշա-
պէս կ'ազդարարէ թէ՛ պատերազմէն վերջ երեւան
դալիք միջազգային արարածը՝ Սատանային դիւա-
կան կազմակերպութենէն ազատութիւն չպիտի բերէ:
«Բարեյոն»-ը պատկերն էր անոր կազմակերպու-
թեան, որ երկրիս վրայ տեսանելի կերպով ներկա-
յացուած է «Քրիստոնեայ աշխարհ»ի հոգեւոր խոր-
հրդատուին՝ «կազմակերպեալ կրօնք»ին՝ միջոցաւ:
Եղեմէն սկսեալ՝ հակառակորդը կրօնքը իբրեւ մի-
ջոց դործածած է մարդիկ մեղքի ու մահուան դերի
պահելու համար: Միջազգային թշնամութիւններէն
յետոյ՝ երբ «նոր կարգ» արարածը ինքզինք ցուցա-
դրէ՝ այն ժամանակ կազմակերպեալ կրօնքը «բանի
մը պիտի սկսի»: Ըստ իր ներկայ ծրագիրներուն՝
նա այդ շիկադոյն արարածին վրայ իբրեւ տիրուհի
պիտի բազմի: Կա՛յ կրօնական կազմակերպութիւն
մը՝ որ երկրիս ամբողջ կազմակերպեալ կրօնքին վը-
րայ կը տիրէ: Այդ մէկը՝ զարբու ծնունդ իր խո-
րամանկութեամբն ու հնարամտութեամբը՝ իր ազ-
դեցութիւնը պիտի բանեցնէ նոր կարգը աշխարհա-
ծաւալ ընելու համար: Յայտ. Ժէ. գլուխը այս բանը
կը նախաձայնէ. եւ ան պարապ պիտի չելլէ, որով-
հետեւ Աստուծոյ Սօսքը դատարկ եւ անկատար ետ
պիտի չզատնայ իրեն:

Կրօնքն ու անոր քաղաքական եւ առեւտրական
դաշնակիցները պիտի ջանան երկրիս վրայ ունեցած
իրենց իշխանութիւնը անորոջ կերպով երկարաձգել,
հակառակ արդարադատ Նոր Աշխարհին, որուն


հաստատման ժամանակը հասած է Եհովա Աստուծոյ համար: Նոր կարգի յուսացող ժողովուրդներուն համար աւելի մեծ գերութիւն միայն կը սպասէ «այս աշխարհի աստուած»ին ու մեղքին ներքեւ, ինչ որ Եհովա Աստուծոյ հակառակութիւն կը նշանակէ: Ակնկալուած ազատութիւնները ո՛չ պիտի իրականանան եւ ո՛չ ալ տեւական պիտի ըլլան, որովհետեւ՝ Քրիստոսի միջոցաւ կառավարուելիք Աստուծոյ թագաւորութեան այդ կեղծ նմանութիւնը՝ Եհովա Աստուծոյ օրհնութեան պիտի չարժանանայ: Սա՛ է միակ ազատութիւնը զոր Նա անոր համար պիտի յայտարարէ, ինչպէս որ բուռն է, «ահա ես ձեզի համար, կ'ըսէ Տէրը, սուրին, ժանտախտին ու սովին ազատութիւնը կը քարոզեմ»: ատիկա ըլլալով հին Երուսաղէմին ահաւոր վախճանը: Ուրեմն վայն է եկեր կրօնքին: Յայտնութեան մարզարէութիւնը ներկայիս կրնանք հասկընալ, թէ յետպատերազմի կարգ ու սարքերուն բուն վախճանէն առաջ, քաղաքական, ղինտորական եւ առեւտրական իշխող տարրերը այն գիտակցութեամբը պիտի սթափին թէ՛ կազմակերպեալ կրօնքը ահունելի թակարդ մը եղած է իրենց համար, որ իրենց վզին անցուած խեղդկապով զէպի Արմազեղոնի ու շնչացման քաշած տարած է գիրենք: Անոնք սրտի խոր դառնութեամբ ու նողկանքով կազմակերպեալ կրօնքին դէմ պիտի ելլեն, դայն պիտի մերկացնեն եւ անոր սրբապիղծ կազմակերպութիւնը բզիկ բզիկ պիտի պատռեն: Անյազար կերպով անոնք իրենց կոխը յառաջ պիտի տանին Եհովայի ու Նոր Աշխարհի Անոր Թագաւորին դէմ: Եհովայի խոստման հաւատացող եւ կեանքի ու ազատութեան Նոր Աշխարհին համար Անոր յուսացող բացի բազմատարր փոքրաթիւ անհատներէն, միւս բոլոր մարդիկը՝ աշխարհին Օրինաւոր Իշխաններուն, Եհովա Աստուծոյ եւ Քրիստոս Յիսուսի, դէմ կուուելու պիտի հանուին խմբովին: Աստուածպետական Նոր Աշխարհին այդ

3377-89

ընդդիմացողներէն եւ ոչ մէկը ողջ պիտի մնայ: Մարդակերտ նոր կարգերու զօրավիգներուն այդ անխուսափելի վախճանը նկատի ունենալով՝ բարեացակամ անձեր թող այժմ զգուշութիւն ընեն իրենց քայլերուն-- Յայտ. ԺԷ. 12--18, ԺԹ. 19--21:

ՄԻԱԿ ՎՍՏԱՀԵԼԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Հեռաւոր անցեալին մէջ՝ Տէր Աստուած Նոր Աշխարհի կառուցման եւ անոր երանաւէտ օրհնութեանց մասին նախաձայնեց, եւ հաւատացեալ մարդիկ հաւատացին անոր զալուն: Անոնք այնպէս չըխորհեցան թէ Աստուած կը դանդաղէր Իր խոստումին իրականացման մէջ: Անոնք չենթադրեցին՝ թէ այդ պատճառաւ՝ Անոր խոստումը իրենց իրաւասութիւն կու տար խնդիրը իրենց ձեռքը առնել եւ անձամբ հաստատել խոստացեալ աշխարհը եւ ատոր փառքն ու պատիւը իրենք իրենց վերագրել: Ո՛չ. անոնք անոր շինութեանը համար Աստուծոյ սահմանած ժամանակին սպասեցին: Միեւնոյն առեւն՝ արդարադատ այդ պանծալի աշխարհին համար անոնք կազմ ու պատրաստ վիճակի մէջ կեցան եւ անոր զալուն մասին խօսելով Եհովայի վկաները եղան: Ատոնց չարքէն էին Արրահամ, Իսահակ եւ Յակոբ, որոնց մասին գրուած է. «Հաւատքով (Արրահամ) պանդխտացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտարութեան մէջ, եւ վրաններու մէջ բնակեցաւ Իսահակի ու Յակոբի հետ մէկտեղ, որոնք իրեն հետ ժառանգորդ էին նոյն խոստմունքին. վասն զի ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարապետը ու արարիչը Աստուած է: Անոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստմունքները չառած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, եւ խոստովանեցան թէ իրենք օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ: Գանդի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ դաւաճ մը կը փնտռեն: Եւ յորաւի եթէ զանիկա յիշին՝



ուրիշ որ ելան, ժամանակ ունէին հոն դառնալու: Բայց հիմա լաւագոյն գաւառի մը կը վաժարէին, այսինքն երկնաւորին: ուստի ամօթ չսեպեր Աստուած անոնց Աստուածն ըսուիլ, վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց»-- Երբ. ԺԱ. 9, 10, 13--16:

Ուրիշներու նման Պետրոս առաքեալն ալ չէր խարւած այս աշխարհի մասին մարդոց ըրած հրապուրիչ խոստումներէն, որոնք յայտարարած են թէ անոր բարւոքմանն ու բարեկարգութեանը համար կ'աշխատին: Նախ ուշադրութիւն հրաւիրելով Ջրհեղեղով կործանուած առաջին աշխարհի բախտին եւ այս աշխարհի ճակատագրին եւ ի վերջոյ՝ Աստուծոյ խոստացած նոր աշխարհին մասին, առաքեալը կը գրէ. «Որով հին աշխարհը ջուրով ողողուած կորսուեցաւ (տես անգլ. Ս. Գիրք). եւ հիմակուան երկինքը ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են, մինչեւ գատաստանին ու ամբարիշտ մարդոց կորուստին օրը կրակի համար պահուած: Սակայն իր (Աստուծոյ) խոստումին համեմատ, նոր երկինքի ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի» (Բ. Պետ. Գ. 6, 7, 13): Հետեւաբար Պետրոս այս աշխարհի կայսերական, դիկտատորական ըստ բացարձակապետական իշխաններուն հետ քաղաքական սեւէ համաձայնութիւն կամ դաշինք չըկնքեց, կամ իրբեւ իրենց հոգեւոր խորհրդականը եւ գեր-ազգային իշխանը անոնց զլխուն վրայ բազմելու եւ կամ այս աշխարհը դարձի բերելու եւ իրեն վիճակուած կործանումէն ազատելու համար: Պետրոս՝ աշխարհի սոցերուն մէջէն ԵՏՈՎԱ Աստուծոյ անուանը համար ժողովուրդ մը աննկու ասուածային գործին նուիրեց ինքզինք ամբողջովին, որպէս զի ասոնք Աստուծոյ հաստատելիք Նոր Աշխարհի երկնային թագաւորութեան կեանքին համար պատրաստուին-- Գործք ԺԵ. 7--14:

Աստուծոյ Խօսքը որոշապէս կը նկարագրէ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԷ՛, եւ կը յայտնէ ԵՏՈՎԱՅԻ

կողմէ անդառնալի կերպով երաշխաւորուած ըլլալը: Անիկա՛ ազատ Կառավարութեամբ մը, երկնային Կառավարութեամբ մը, կառավարուած աշխարհ մը պիտի ըլլայ, հետեւաբար վերէն է որ պիտի կառավարուի, եւ ոչ թէ երկրիս վրայ եղած մարդոցմէ: Այդ կառավարութիւնը այն պանծալի «քաղաք»ն է՝ որուն համար հաւատարմով սպասեցին Սբրահամ եւ Աստուծոյ խոստման իր ժառանգակիցները: Ան յայտնուած է երկնային Երուսաղէմ խորհրդաւոր անունով: Պօղոս առաքեալ Հայր Աստուծմէ ծնած էր այդ երկնային Կառավարութեան մէկ քաղաքացին ըլլալու համար: Երկնից թագաւորութեան համար աշխատող ուրիշ Գրիստոնեաներու գրելով Պօղոս ըսաւ. «Բայց վերի Երուսաղէմը ազատ է, որ մեր ամենուն մայրն է»: Ան ճշգրիտ հակապատկերն է հին Երուսաղէմի, որ կրօնքի պատճառաւ գերի դառնալով՝ Նոր Աշխարհի Թագաւորը մերժեց ու սպաննեց եւ ատոր համար Գ. Թ. 70-ին քար ու քանդ եղաւ Հռոմի կայսերական բանակներուն կողմէ: Սակայն՝ այն Օծեալը՝ զոր կրօնապաշտ Երուսաղէմը լիայտին վրայ դամեց՝ գլուխը ծռելով անոր կրօնքին ջճառայելուն համար, այժմ իրբեւ ազատ Թագաւոր կ'իշխէ Նոր Երուսաղէմի մէջ, որ վերէն է: Նոր Երուսաղէմը հեթանոս ազգերու ոտից կոխան պիտի չըլլայ երբեք եւ ոչ ալ պիտի կործանուի, հասցա յաւիտեան պիտի իշխէ ազատութեան եւ արդարութեան Նոր Աշխարհին իրբեւ պատնէշը: «Ուստի, եղբայրներ», կ'ըսէ Պօղոս առաքեալ վերջացնելով իր խօսքը. «մենք աղախինին գաւակները չենք, հասցա աղախին»-- Գաղ. Գ. 25, 26, 31:

Այդ Կառավարութիւնը «նոր երկինք»ը կը կազմէ, որուն առջեւն պիտի անյայտանան «հիմակուան երկինքն ու երկիրը»: Այդ իրողութիւնը բոլոր բարեացակամ անհասանելու խիստ հիմնական ազատութիւն կ'երաշխաւորէ, բան մը որ աշխարհավարներն ու կրօնապաշտները եւ մարդկային բարեկարգիչները

ո՛չ երաշխաւորելու եւ ո՛չ ալ հաստատելու կա՛րողութիւնն ու յանդգնութիւնը ունին: Ինչո՞ւ այդպէս: Քանզի՛ յետպատերազմի նոր կարգադրութիւնը մարդկութիւնը տակաւին իր սողացող վիճակին մէջ պիտի թողու մեղքին ու կրօնքին հեղինակ Բանսարկու Սատանային բռնապետութեան տակ: Այդ անըզգամը ու իր դիւային հորդաները 1914-էն սկսեալ երկինքէն դուրս ձգուեցան, երբ Եհովա Աստուած Իր Որդին թագաւորական աթոռին վրայ դբաւ եւ Նոր Աշխարհի Կառավարութիւնը ծնաւ: Բանսարկուն եւ անոր դեւերը երկրիս վրայ նետուեցան: Հետեւաբար սուտ պիտի ելլեն այն բոլոր մարդկային խտտումները թէ՛ յետպատերազմի կարգադրութիւնը լաւագոյն ժամանակներ պիտի բերէ. որովհետեւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Վա՛յ երկրի ու ծովու (բնակիչներուդ), վասն զի Բանսարկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՛՝ զխոնարիվ որ քիչ ժամանակ պիտի կենայ»: Որքան ատեն որ նա ազատ համարձակ կը շրջի, ու չկայ կրօնական կամ քաղաքական երկրային կազմակերպութիւն մը՝ որ կարող ըլլայ Բանսարկուն կապել, ներկայ համաշխարհային պատերազմէն վերապրողները կրնան ակնկալել ոչ թէ մեծագոյն ազատութիւններ՝ հապա ժողովուրդներու յարաձուն բանակներ ու հարստահարութիւններ, զանոնք «այս աշխարհի աստուած»ին հպատակ պահելու՝ եւ անհաւատութեան ու կրօնքի առաջնորդելով՝ Եհովայ եւ Անոր թագաւորութեան դէմ հանելու նպատակաւ: Երբ Սատանան այդպէս ժողովուրդներու վրայ բացարձակ իշխանութիւն կը բանեցնէ եւ անոնց ազատութիւնները աստիճանաբար կը կաշկանդէ, իր յարձակման գլխաւոր առարկաները պիտի ըլլան Քրիստոս Յիսուսի արդարադատ իշխանութիւնը յայտարարողներն ու պաշտպանողները, այսինքն՝ երկնային ազատ Երուսաղէմի զաւակներուն երկրային մնացորդները: Աստուծոյ Խօսքը կ'ազդարարէ. «Ու երբ վիշապը տեսաւ որ ինք երկրի վրայ

ձգուեցաւ, արու զաւակ ծնանող կնոջ ետեւէն եղաւ: ...Ու վիշապը բարկացաւ կնոջ դէմ, եւ դնաց պատերազմելու անոր ուրիշ զաւակներուն դէմ, որոնք Աստուծոյ պատուիրանները կը պահէին ու Յիսուսի (Քս.ի) վկայութիւնը ունէին»-- Յայտ. ԺԲ. 1--17:

Բացորոշ է թէ՛ Եհովայի վկաներուն եւ անոնց բարեացակամ ընկերակիցներուն կողմէ՛ Աստուծոյ եւ Անոր Թագաւորին պաշտամունք, ծառայութիւն ու փառաբանութիւն մատուցանելու ազատութեան համար մղուած պայքարը յետպատերազմի նոր կարգերուն մէջ ալ պիտի շարունակուի եւ պէ՛տք է շարունակուի: Այդ պայքարը իր զագաթնակէտին պիտի հասնի Արմազեղոնի պատերազմին մէջ: Ազատագրութեան փառապանձ Հրեշտակը, Քրիստոս Յիսուս, պատերազմին պիտի միջամտէ եւ ամէն ազատութեանց ամենամեծ թշնամին պիտի սանձահարէ: Ինչպէս որ Աստուծոյ Յայտնութիւնը խորհրդարանօրէն կը նկարագրէ զայն. «Ու բոնեց վիշապը, այսինքն առաջին օձը, որ Բանսարկուն ու Սատանան է, եւ կապեց զանիկա հազար տարի. ու անդունդը ձգեց զանիկա, եւ գոցեց ու վրայէն կնքեց, որ ա՛լ չմոլորեցնէ ազգերը՝ մինչեւ հազար տարին լսննայ, եւ անկէ ետքը պէտք է որ արձակուի անիկա քիչ մը ժամանակ»: Արդարադատ աշխարհին հազար տարի շարունակուելէն վերջ Սատանան ազատ արձակելով՝ ան պիտի չկրնայ նոր երկինքն ու երկիրը ապականել ու տապալել: Այդ անգգամը այն ժամանակ բնաջինջ պիտի ըլլայ Գեհենի կրակին մէջ՝ որ բոլոր ազատեցութիւնները կ'այրէ ու կը մաքրագործէ տիեզերքը-- Յայտ. Ի. 1--3, 7--10:

Նոր Երուսաղէմի Թագաւորը, երկրիս վրայ իբրեւ մարդ եղած եւ իբրեւ «մարդոյ Որդի» ճանչցուած ժամանակ ըսաւ. «Ամէն ով որ մեզ կը զօրծէ, անիկա մեղքի ծառայ է: Եւ ծառան տանը մէջ յաւիտեան չմնար, բայց Որդին յաւիտեան կը մնայ: Ուստի եթէ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ

պիտի ըլլաք» (Յովհ. Ը. 34--36) : Յետպատերազմի «Քրիստոնէայ աշխարհ»ը այնքան անյաշող պիտի ըլլայ ժողովուրդը մեզքէ ազատելու իր ջանքերուն մէջ՝ որքան որ նա որոշապէս պիտի չկրնայ ազգերը ազատել իրենց աներեւոյթ գերիշխան Սատանայէն ու անոր բոլոր չարակամ դեւերէն : Տարբերութիւն չընեն թէ «կազմակերպեալ կրօնք»ը նոր կարգերուն վրայ նստած զայն պիտի դեկավարէ եւ «աւելի» ոյժ պիտի տան «կրօնք»ին : Գերի եղողները ինչպէ՞ս կրնան ազատել ուրիշ գերիներ : Կրօնապաշտներն ու անոնց քաղաքական, առեւտրական եւ դատական համախոհները իրենք ալ բոլորովին մեղքին ծառաներն են, անկարող իրենց մէջ եղած մեղքը յաղթելու եւ անկարող այս աշխարհի մէջէն մեղքն ու շահախնդրութիւնը օրէնքով վերցնելու : Անոնք ճառարներ եւ ոչ թէ ազատ որդիներ եղած ըլլալով՝ կարգարատեն կանգուն պիտի չմնան : Պարս'պ բան է ազատութիւն յուսալ անոնցմէ՝ որքան ժամանակ որ այս աշխարհը կը մնայ :

Նոր Աշխարհի Թագաւորը Աստուծոյ անմեղ Որդին է եւ նա ազատ է : Անիկա իր բոլոր հնազանդ հպատակներուն «Յաւիտենականութեան Հայր»ը պիտի ըլլայ, եւ զանոնք իր որդիներն ու ազջիկները պիտի ընէ : Երբ նա զանոնք ազատէ՝ անոնք իրապէս «ազատ» պիտի ըլլան : Թէպէտ անոնք անօրինութեամբ յղացուած ու մեղքով ծնուած են Ազամի ու Եւայի բնական սերունդը եղած ըլլալուն համար, սակայն, երբ Աստուծոյ Թագաւորութեան նկատմամբ բարեացակամութիւն ու նուիրում ցոյց տան, նոր երկնից Թագաւորին կողմէ՝ պիտի որդեգրուին եւ վերածնունդն : Նա Աստուծոյ Գառն է որ աշխարհի մեղքը կը վերցնէ, եւ այն Նոր Աշխարհին մէջ իր հպատակ-որդիները պիտի ազատէ մեղքին դատապարտութենէն ու ատոր պատճառած բոլոր անկարողութիւններէն : Արմազեզոնի ժամանակ բոլոր անդամ մարդիկն ու դեւերը մէջտեղէն վերցուած

ըլլալով՝ ալ ունէ մէկը դիրենք պիտի չարգելի Եհովա Աստուծոյ ծառայելէ եւ Անոր Թագաւորին հնազանդելէ : Արդարութիւն գործելու համար անոնք ամէն օժանդակութիւն պիտի ստանան : Իրենց 'Յաւիտենականութեան Հօր' վերածնական գործողութեանց չնորհիւ՝ անոնք պիտի ազատին իրենց մարմիններուն մէջ եղած անկատարութիւններէն եւ ժառանգական «մեղքի օրէնք»էն, եւ մեղքին իրապէս յաղթելով Աստուծոյ առջեւ կատարեալ ու ճշմարտապէս արդար պիտի ըլլան :

ՏԵՍԱՆԵԼԻ ԻՇՅԱՆՆԵՐ ՆՈՐ ԵՐԿՐԻՆ ՄԷՁ

Ո՛չ մէկ աշխարհավար, մարդոց վրայ դիւտատորական իշխանութիւն յափշտակող ո՛չ մէկ անձ պիտի գտնուի հոն՝ որ չարագործութիւն ծրարէ հանդէպ անոնց՝ որոնք Աստուծոյ կը մատուցանեն ամէն ինչ որ Աստուծոյ կը պատկանի : Արքայական կեսարը, իր Հոռով մայրաքաղաքը եւ դաշնակից Վատիկան Քաղաքը՝ այլեւս պիտի չկրնան ոտնակոխ ընել այն որ Աստուծոյ կը պատկանի : Անոնք ՅԱԻԷ՛Տ անյայտացած պիտի ըլլան : Եհովայի վկաններուն ընկերացող «բարեացակամ անհատներ», ճշմարտութեան պատճառաւ ներկայիս վայելած իրենց ազատութեանը համար, հիմակուրնէ իսկ անոնց կը միանան կրկնելով մարդարէական խօսքերը եւ երախտագիտօրէն կ'ընեն Եհովայի . «Ով Տէր, մեզի խաղաղութիւն պիտի տաս, վասն զի մեր ամէն գործերն ալ դուն մեզի համար գործեցիր : Ով Տէր Աստուած մեր, ջեզմէ (զատ) ուրիշ տէրեր մեր վրայ տիրեցին, բայց ըստ անունդ, միմակ քուկդ, կը յիշենք . անոնք մեռած են, պիտի չողջնան . ուրուականներ են, չեն կրնար ելլել : վասն զի դուն այցելութիւն ընելով՝ զանոնք բնաջինջ ըրիր, ու անոնց բոլոր յիշատակը կորսնցուցիր» (Եսայ. ԻԶ. 12--14) : Այն ժամանակ քաղաքական կամ կրօնական ոչ մէկ իշխան պիտի յայտարարէ թէ ինք «Աստուծմէ կարդը-

լած» «վերին իշխանութիւն»ն է: Ընդհակառակը՝ ազատութեան թաղաւորը իր ձայնը պիտի բարձրացնէ, ու հին ժամանակուան բոլոր հաւատացեալ մարգարէներն ու նահապետները լսելով յառաջ պիտի դան «կենաց յարութեան համար», «լաւագո՛յն յարութիւն» մը, մարդկային կատարելութեամբ: Ատոնք «բոլոր երկրիս վրայ իշխաններ» պիտի դըրւին: Իրենց երկնաւոր կենսապարզելին ու թագաւորին որպէս տեսանելի ներկայացուցիչները՝ անոնք երկնային դատաստանները ստանալով արդարութիւն ի գործ պիտի դնեն բոլոր մարդոց մէջ: «Ահա թագաւոր մը արդարութեամբ պիտի թագաւորէ, ու իշխանները իրաւունքով պիտի իշխեն» (Ես. ԼԲ. 1, Յովհ. Ե. 28, 29, Սաղմ. 106. 16): Աստուծոյ եւ Անոր արդարութեան նկատմամբ իրենց ցոյց տուած հաւատքին ու հաւատարմութեանը համար՝ այդ հինաւորց մարդիկը կրօնապաշտներուն ձեռքէն ամէն տեսակ զրկանք, նեղութիւն ու չարչարանք կրեցին «եւ չընդունեցին ազատութիւնը, որպէս զի լաւագոյն յարութեան հասնին»: Ուրեմն, երկնային Աստուծապետութեան տակ, երկրիս վրայ իշխանական պաշտօնի վրայ իրենց հաստատուիլը առաւել երաշխաւորութիւն կ'ընծայէ թէ՛ այս երկիրս ազատ պիտի ըլլայ կաշտակերութիւններէ, քուէի դնումներէ, հարստահարութիւններէ եւ ժողովուրդին շահերուն դէմ ի գործ դրուած դաւադրութիւններէ՝ Երբայեցիս ԺԱ. 32-40:

Քրիստոս Յիսուսի եւ Անոր հաւատարիմ հետեւորդներուն ու ժառանգակիցներուն երկնային արքայական իշխանութիւնը մարդոց վրայ տարածւած՝ եւ այդ հաւատարիմ իշխանները մաքրագործըւած երկրիս վրայ եղած ըլլալով՝ արդարութեան եւ իրաւունքի այդ աշխարհը յիշուի «նոր երկիր» մը եւ «նոր երկիր» մը պիտի ըլլայ, «որոնց մէջ արգարութիւն կը բնակի»: Այդ աշխարհը պիտի չվրդովւի ժողովրդապետական ընտրապայքարներով, ցե-

խահարութիւններով եւ դրամական մտնումներով: Եհովա Աստուծոյ հաստատած Կառավարութիւնը «ուրիշ ժողովուրդի պիտի չթողուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ»: Եւ ատոր ներքեւ մարդիկ յաւիտեան պիտի հրճուին ու դոհանան-- Դանիէլի Բ. 44:

Այդ Կառավարութիւնը բոլոր վայելքներէ մ որպէս պահապան պիտի կանգնի: Զինուորականութիւնը բոլորովին մէջտեղէն պիտի վերցուի. եւ միջազգային ոստիկանական ուժի հարկ պիտի չըլլայ այդ Կառավարութեան վճիռները պարտադրելու եւ կրօնական կազմակերպութեան մը զաւակը արգիլելու՝ որ չէլլէ ու այդ «կրօնական աղանդին որպէս սուրբ» գործի գլուխ անցնի եւ զիկատարութիւն ու աշխարհակալութիւն ձեռք բերէ: Զօրութեան քաղաքականութիւններ, զիւանազխութիւններ, զաղտնի ընկերակցութիւններ ու զաշնագրութիւններ այլ-եւս պիտի չխանդարեն ժողովուրդներուն յարեթութիւնները: Արմագեդոնի մեծ պատերազմէն յետոյ՝ ազգերու բաժանման սահմանները բոլորովին պիտի վերցուին. առեւտրական բոլոր արդէլքներն ու մաքսերը, գաղթավայրերու բոլոր շահագործութիւնները, ցեղային բոլոր նախապաշարմանները, խորութիւնները եւ անհաւասարութիւնները պիտի դադրին: Քրիստոս Յիսուս անհատներու միջեւ խրտութիւն չզննը. Անոր փրկութիւնը բոլոր ազգաց բարեացակամ անձերու համար է: Անոնց ամէն մէկը եւ բոլորը պարտին հաւասարապէս կեանք ընդունիլ Անկէ իբրեւ Անոր բարեգութիւն ընծան եւ Անոր զաւակներն ըլլալ, Փրկչին երկրային մարտեղէն ընտանիքը: Այդ ատեն տեղի պիտի ունենայ այն՝ ինչ որ ներկայիս ճշմարտութիւն մըն է եկեղեցիին համար, որուն նկատմամբ գրուած է. «Ուր Յոյն ու Հրեայ, թլիպատութիւն ու անթլիպատութիւն, Բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ. հապա Քրիս-

տոս է ամէնը՝ եւ ամէն բանի մէջ»-- Կողոս. Գ. 11:

Ասիկա որքան մեծ չափով պիտի օգնէ մարդոց որ ուրիշ մարդոց հանդէպ սէր ունենան: Ասիկա պիտի նշանակէ ազատութիւն ատելութենէ, որ մարդասպանութիւն է: Երկրորդ պատուիրանքին համաձայն դրացիին հանդէպ ցոյց տրուած սէրը իր կատարելութեան պիտի հասնի՝ երբ մարդիկ, առաջին եւ մեծագոյն պատուէրին համաձայն, Եհովան կը սիրեն իրենց բոլոր սրտովը, մտքովը, զօրութեամբն ու հոգիովը: Մարդուն սրտին մէջ կատարելագործըւած այդ սէրը՝ ամէն վախ մէկ կողմ պիտի նետէ. որովհետեւ վախը իր մէջ տանջանք ունի եւ ազատութեան Նոր Աշխարհին մէջ տեղ չկայ ատոր համար-- Ա. Յովհաննու Գ. 17, 18:

Երբ նտախօսներու հայրը՝ եղող Սատանան Արմամազեղոնի ժամանակ ճգմուի Թագաւորին ոտքին տակ՝ անոր հետ վերջ պիտի գտնեն նաեւ անոր սուտերը, որոնք կրօնքի հիմը կը կազմեն: Աստուծոյ նկատմամբ ըսուած սուտերու եւ կրօնական հայհոյանքներու ազատ համարձակ տարածման շրջանն ալ վերջացած պիտի ըլլայ, եւ թող պիտի չտրուի որ կրօնապաշտ կղերներու եւ անոնց խարուած թեմականներուն սուտերը սանձարձակ յառաջ երթան: Ինչո՞ւ այդպէս պիտի ըլլայ: Անոր համար որ ստութիւնները մարդիկ գերի կը վարեն, մինչդեռ դալիք աշխարհը ազատութեան աշխարհ մը պիտի ըլլայ: Սուա վիճակութիւններ եւ անճշմարտութիւններ բընաւ պիտի չարտօնուին, հասնա՝ ճշմարտութիւնը խօսելու բացարձակ ազատութիւն դոյութիւն պիտի ունենայ: Մարդկային, դիւական եւ կրօնական անաղութիւններ անյայտացած պիտի ըլլան ճշմարտութեան մերկացնող լոյսին առջեւէն, եւ այդ ճշմարտութիւնը Աստուծոյ Ոտքին մէջ կը գտնուի: Անոր Թագաւորը՝ Քրիստոս Յիսուս՝ ըսաւ. «Եթէ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. եւ ճշմարտութիւնը պիտի գիտ-

նաք, ու այդ ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յովհ. Ը. 31, 32): Նոր Աշխարհի եւ անոր Աստուածպետական Կառավարութեան դատաստանական կանոնին մասին սապէս կը կարդանք. «Վախկոտներուն, ու անհաւատներուն, եւ պիղծերուն, ու մարդասպաններուն, ու պոռնիկներուն, եւ կախարդներուն, ու կռապաշտներուն, եւ բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վտած լծին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը: Եւ հոն բնաւ անմաքրութիւն (ընող) մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը, հասպ միայն անոնք՝ որ Գառնուկին կենաց դրքին մէջ գրուած են» Յայտնութիւն ԻԱ. 8, 27:

Սա՛ կերպ արտայայտուած է այն օրէնքը՝ զոր այն ժամանակ յօտարութեամբ ու սիրով պիտի պահեն երկրիս վրայ եղած ազատ մարդիկը. «Ձեր ընելու բաները ասոնք են. ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, ձեր զոններուն մէջ արդարութեամբ եւ խաղաղութեամբ դատաստան տեսէք» (Չաք. Ը. 16, 17, Եփես. Գ. 25): Երկիրս ճշմարտութեամբ պիտի լեցուի, եւ բոլոր ահանջները պիտի լսեն ու լեզուները դայն խօսին առանց զրաբըննութեան եւ արգելքի, եւ մոլորութիւնը պիտի չբկուրացնէ աչքերը: Ինչպէս որ մարդարէն ըսած է. «Այն ատեն կոյրերուն աչքերը պիտի բացուին, ու խուլերուն ահանջները պիտի բացուին: Այն ատեն կաղը եղջերուի պէս պիտի ցաթկաէ, ու համբին լեզուն ԱՁԱՏ պիտի ըլլայ» (Եսայ. ԼԵ. 5, 6, Տուէյ): Կրօնական դպրոցներն ու դպրեկանքերը, «սուտանուն գիտութիւն»ը, եւ սեւէ տգիտութիւն անկարելութիւն պիտի ըլլայ: «Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուան պատերազմ»ին ժամանակ՝ Նա պիտի կանդնի եւ դոյութիւն ունեցող բոլոր արարածներուն պիտի գիտցնէ թէ Ի՛նք է Եհովան ու զերագոյնը, եւ թէ միայն Ի՛նք է որ կ'իշխէ տիեզերքի մէջ: «Քանզի երկիրը Եհովայի փոսքին գիտութիւնովը

պիտի լեցուի, ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն» (Ամբակ. Բ. 14, Ամերկ. Վերքն. Թարգմ.): Այդ գիտութիւնը յաւիտենական կեանք կը նշանակէ բոլոր անոնց համար որ անով կը լուսացուին ու կը մաքրուին: Տիեզերական Կառավարիչին եւ «անվերջ աշխարհ»ը Շինողին վախը (ակնածանքը) բոլոր մարդոց վրայ պիտի ըլլայ, սա հետեւանքով. «Անոնք պիտի չապականեն ու չվնասեն իմ բոլոր սուրբ լեռանս վրայ: Քանզի երկիրը Եհովայի գիտութիւնովը պիտի լեցուի»-- Եսայ. ԺԱ. 9, Յովհ. ԺԷ. 3, Ամերկ. Վերքն. Թարգմ.:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԴԷՄ

Նոր Աշխարհը իր հետ պիտի բերէ անգործութեան բոլոր հարցերէ ազատութիւն: Քրիստոս Յիսուսի հազարամեայ թագաւորութեան սկզբնաւորութեանը աստուածային հրամանը (ածելու եւ բազմանալու) դարձեալ պիտի կրկնուի բարեացակամ մարդոց: Եւ Արմազեզոնի պատերազմէն վերապրողները, մեծ ջրհեղեղէն վերջ Նոյի որդիներուն ու անոնց կիներուն նման, այդ հրամանին հնազանդելով երկիրը արդար սերունդով լեցնելու գործին իրենց բաժինը պիտի կատարեն: Այն ատեն այլեւս պէտք պիտի չըլլայ որ կառավարութիւն մը «ընկերային ապահովութեան» (սօշըլ սիֆիւրիթի) ծրագիրը որդեգրէ՝ «օրօրոցէն գերեզման» ապահովութիւն երաշխաւորելով: Աստուածային հրամանն ի դժբաժնի գնողները արդարութեամբ դաւակներ առաջ պիտի բերեն, եւ այն ալ ոչ թէ նեղութեան՝ կամ օրօրոցէն խսկ մահուան ենթակայ ըլլալու համար: Անոնք ապահով կերպով իրենց դաւակները պիտի մեծցնեն առողջաբար ու արդար պայմաններու տակ, «Տիրոջը վարժութիւնովը ու խրատովը» (Յփես. 2. 4): Աստուծոյ եւ Անոր Թագաւորին ուրախութեամբ ծառայելով այդ խրատին հետեւողները՝ ո՛չ ծերութիւն պիտի գիտ-

նան եւ ոչ ալ հուսկ յետոյ գերեզման պիտի իջնեն գողալով գողողելով: Փորձութեան, եւ նամանաւանդ Սատանային կարծատեւ արձակման արդիւնք եղող փորձութեան ատեն կատարեալ հնազանդութիւն ցոյց տուողները՝ իրենց «Յաւիտենականութեան Հայր»էն ու Թագաւորէն՝ «Սաղաղութեան Իշխան»էն՝ վստահաբար պիտի ստանան մարդկային կատարելութեամբ յաւիտենական կենաց վարձատրութիւնը:

Երկրին նուաճումը եւ ամէն տեղ դրախտի վերածումը՝ բոլորին ալ գործելու պատահութիւն պիտի ընծայէ. եւ իրենց ձեռաց գործերը ոչնչութեան պիտի չմատնուին՝ հապա մնալուն պիտի ըլլան: Եւ՝ ներկայ մարդկային անկատարութեան արդիւնք եղող յոյնութենէն ազատութիւնը՝ երախտագիտութեան որքա՞ն մեծ պատճառ մը պիտի ըլլայ. ու հաւատքով եւ բոլորանուէր սրտով Աստուծոյ ծառայողները՝ մշտնջենական շարժմը, անվախճան յոբելեան մը պիտի վայելեն այդպէս (Եսայեայ ԿԵ. 17--25): Քրիստոս Յիսուս Թագաւորը՝ Իր երկրային կարծատեւ կեանքին տեւողութեանը՝ հաւատքով Իրեն եկողները բժշկեց: Այժմ, Իր երկնային Թագաւորական զօրութեամբը, հանրային առողջապահական ապահովագրութեան սեւէ ծրագրէ կամ ներկայ սեւէ կառավարութեան դրամական օժանդակութեամբը յառաջ տարուած բժշկական գործին ընծայածէն կամ ըրածէն շատ աւելի մեծ չափով՝ Նա Իր հնազանդ ու հաւատարիմ հպատակներուն, Իր Երաւակներուն, առողջութեանը հոգ պիտի տանի: Արքայական մեծ Բժիշկը, որ Իր հպատակներուն փրկութեանը համար մեռաւ, հիւանդութենէ, ծերութենէ, եւ նոյն խսկ մահէ, կատարեալ ազատութիւն պիտի երաշխաւորէ անոնց: Նա խորտակուած, անկատար, ծերացող մարդկութիւնը պիտի վերանորոգէ ու դարձեալ երիտասարդացնէ, ու մշտնջենական ղեռառնութեան սիրունութեամբն ու կորովովը

վերաշինէ, ո՛չ թէ կերպառու վերարուժութեամբ (փլէսքիփ սըրբըրի-- կոտրած քիթ կամ ալրած դէմք կարկտելով) կամ դիմարարձութեամբ եւ կամ մարդկային ուրիշ հնարքներով, հասցա ստեղծադորձական այն զօրութեամբը՝ զոր Նա ունէր երբ Աստուած ըսաւ Անոր, «Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք»:

Թագաւորը այս երկրիս վրայ եղած ատեն՝ Նա ոչ միայն հիւանդները բուժեց, խեղանդամները վերանորոգեց, եւ դիւահարմները ազատեց, հասցա նաեւ մեռելները յարոյց: Անոր Թագաւորութեան ատեն՝ անելու եւ բազմանալու աստուածային հրամանին գործադրութեամբը երկիրը պէտք եղածէն աւելի բնակչութեամբ պիտի չլեցուի. եւ ոչ ալ Արարչին կարողութենէն վեր պիտի ըլլայ հրամայելու. «Թող աւելի ցամաք երեւնայ»: Երբ անելու եւ բազմանալու աստուածային հրամանը ի գործ դրուած եւ ամբողջ երկիրը դրախտի վերածուած է, այն ժամանակ զերեզմաններու մէջ եղած «ուրիշ մեռելները» Թագաւորին փրկագոհութեան բարիքները պիտի ստանան: Հրաշագործ զօրութիւնը ատենք զերեզմաններէն ետ պիտի բերէ, «ու դուրս պիտի գան . . . անոնք որ չար գործեր են՝ դատատանի յարութեան համար» (Յովհ. Ե. 28, 29, տես հայերէն դրաբար եւ արեւելեան աշխարհաբար Ս. Գրքերը): Անոնք այն ժամանակ աշխարհի վրայ իրենց ընելիք գործերովն է որ պիտի դատուին: Հազարամէի վախճանին, կարճ ատենուան մը համար փորձիչին ազատ արձակման ժամանակ, եթէ անոնք իրենց կատարելութեան մէջ մնան սրտի խորութիւնները քննող այդ փորձարկութեան պարագային, իրենց Դատաւորը զիրենք պիտի վարձատրէ յաւիտենական կենաց համար արդարացնելով զիրենք: Վերջնական փորձարկութեան այդ «բիշ մը ժամանակ»ուան շրջանին՝ երկրիս մարդկութենէն ով որ Աստուծոյ նկատմամբ կատարելապէս անկեղծ չմնար՝ Աստանային նման՝ յաւիտենական

ոչնչացումով պիտի պատժուի-- Յայտ. Ի. 3--15:

Աճելու եւ բազմանալու աստուածային հրամանին գործադրութեամբը եւ երկրային մեռելներու յարուցումովը՝ Նոր Աշխարհին կարօտութենէ բացարձակ ազատութիւնը ամենեւին պիտի չխանդարուի կամ անյայտանայ: Ատիկա ուտելիքի դժուարին հարցեր առաջ պիտի չբերէ, եւ Ուտելիքի Համաշխարհային Պաշտօնէութիւն մը կամ Գործակալութիւն մը շարունակ գործի վրայ պիտի չըլլայ որ օրաբաժնի տետրակներ հրատարակէ եւ երկրիս զանազան մասերուն համար ուտելիքի պաշարներ սահմանէ: Աստուծոյ օրհնութեանը տակ՝ դրախտային երկիրը առատօրէն պիտի արտադրէ: Զբաւորութիւն, սով, երաշտ, խորշակ, միջատներու պատուհասներ եւ համաճարակներ այլեւս երկրին երբեք պիտի չվնասեն: ԵՏՈՎԱԻ կողմէ Քրիստոսի իշխանութեան տակ զբրւած թագաւորութիւնը նմանցումը է անշարժ լեռան մը, եւ ԵՏՈՎԱԻ այս օրուան մէջ՝ Նոր Աշխարհին ապագայ ազատ բնակիչներուն վրայ հիմնական տեղացող օրհնութեանց մասին աստուածային մարգարէութիւնը կը յայտարարէ.

«Եւ զօրաց ԵՏՈՎԱՆ այս լեռան վրայ բոլոր ազգերուն կոչունք մը պիտի ընէ, պարարտ բաներու եւ հին գինիներու, ծուծով լեցուած պարարտ բաներու, ու զտուած հին գինիներու կոչունք: Եւ այս լեռան վրայ ամէն ժողովուրդներու վրայ տարածուած (սուղի) ծածկոցը ու ամէն ազգերուն վրայ փռուած վարադուրը բնաջինջ պիտի ընէ: Մահը յաւիտեան բնաջինջ պիտի ընէ, ու Տէր ԵՏՈՎԱՆ ամէն աչքէ արցունքը պիտի սրբէ, եւ բոլոր երկրի երեսէն իր ժողովուրդին նախատինքը պիտի վերցնէ. վասն զի ԵՏՈՎԱՆ խօսեցաւ: Ու այն օրը պիտի ըսեն, Ահա մեր Աստուածը ասիկա է. անոր յուսացանք, եւ անիկա մեզ պիտի ազատէ. ասիկա ԵՏՈՎԱՆ է. անոր յուսացանք. անոր փրկութիւնովը պիտի ցնձանք եւ

ուրախանանք»-- Եսայ. ԻՆ. 6--9, Ամերիկեան Վերաբնուած Թարգմանութիւն:

Ներկայիս ճշմարտութեան դիտութեան եկող «բարեացակամ մարդիկ» զգոյշ պիտի ըլլան որ խարւելով ծուռ ճամբան ձեռք չառնեն: Անոնք Եհովա Աստուծոյ եւ Անոր Քրիստոս Յիսուս Թաղաւորին պիտի յուսան: Վերը ըսուած բաները՝ կրօնապաշտ «սուրբ»ի մը կողմէ երազուած շինծու Ուտոպիա (երազական կղզի) մը չեն, հապա Աստուծոյ գրի առնուած եւ Անոր անուամբը վկայուած Խօսքերն են, ու ճշմարիտ են (Եսայ. ԽՆ. 23, Սաղմ. ՃԼԸ. 2): Ընդունէ Անոր Խօսքը հիմա՛ ու հաւատա Ատոր, եւ այսուհետեւ թող Ատիկա ըլլայ կեանքի առաջնորդը, յոյսը եւ սիրտանքը: Այդպէս ընելով՝ դուն պիտի ստանաս յաւիտենական կենաց ժառանգութիւնը եւ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԱՇԽԱՐ ՀԻՆ ՄԷՋ:



ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ -- Այս 384 էջնոց բաթակազմ եւ պատկերազարդ հատորը կը պարօճակէ տեղեկութիւններ՝ որոնք ամէն բարեացակամ հայորդիի պիտի օգնեն որ կատարեալ խաղաղութիւն, յաջողութիւն եւ հարստութիւն ձեռք ձգէ: Սոյն հատորին Հայերէնը կամ Անգլերէնը կարելի է ստանալ՝ 2 սէնթ նուէր դրկելով վարը դըրած հասցէին --